

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ

### ՀԱՅ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական համատեղ հանձնաժողովը հիմնվել է համաձայն 1994թ. հոկտեմբերի 7-ին կնքված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի:

Հայկական կողմից հանձնաժողովի նախագահն է ՀՀ էկոնոմիկայի նախարարը: Հայ-ուկրաինական միջկառավարական համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստը կայացել է 1999թ. հուլիսի 20-ին Կիևում: Մինչ օրս անց են կացվել հանձնաժողովի 7 նիստեր: Վերջին յոթերորդ նիստը տեղի է ունեցել 2013թ. նոյեմբերի 8-ին՝ Կիևում: Հաջորդ նիստը նախատեսվում է անցկացնել Երևանում: